



## Ապահովագրական գործակալների (Ֆիզիկական անձ) լիազորություններ

### Ապահովագրության դասերը՝ բոլորը.

- դժբախտ պատահարներից ապահովագրություն
- փոխադրվող գույքի ապահովագրություն
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն
- ցամաքային տրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող
- պատասխանատվության ապահովագրություն
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն
- առողջության ապահովագրություն
- երաշխիքի տրամադրում
- աջակցության ապահովագրություն
- ֆինանսական վնասների ապահովագրություն

### Լիազորությունները՝

1. իրականացնել գույքային և անձնական ապահովագրության պայմանագրերի կնքմանն ուղղված գործողություններ,
2. ուսումնասիրել որոշակի ապահովագրական ծառայությունների տարածաշրջանային պայմաններն ու պահանջարկը,
3. վարել բանակցություններ պոտենցիալ և մշտական հաճախորդների հետ՝ ապահովագրության պայմանագրեր կնքելու և դրանց գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով,
4. ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր կնքելիս սահմանել ռիսկի չափանիշներն ու աստիճանը,
5. ձևակերպել և Ապահովագրողի կնքմանը ներկայացնել և/կամ ինքնուրույն կնքել ապահովագրության պայմանագրերը/վկայագրերը, կարգավորել ապահովադիրների և Ապահովագրողի միջև հարաբերությունները, ընդունել ապահովագրավճարներ,
6. ապահովել ապահովագրավճարների հաշվարկի, ապահովագրական փաստաթղթերի ճշգրտությունը և դրանց պահպանությունը,
7. հաճախորդներին տրամադրել ապահովագրության պայմանների վերաբերյալ վերջնական տեղեկատվություն,
8. կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի գործողության ժամանակահատվածում կապ պաշտպանել ապահովագրության պայմանագրի/վկայագրի կողմ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,
9. ուսումնասիրել հաճախորդներից ստացված դիմում-բողոքներն ու բողոք-պահանջները՝ կապված վերջիններիս հետ կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի հետ,



## Ապահովագրական գործակալների (ֆիզ. անձանց) լիազորություններ

10. հաճախորդին հայտնել ապահովագրության այն դասերի վերաբերյալ, որոնց գծով Ապահովագրողն նրան տվել է ապահովագրական միջնորդություն իրականացնելու լիազորություններ,
11. հաճախորդին Ապահովագրության պայմանագիր կնքելու առաջարկ անել,
12. հաճախորդին ներկայացնել Ապահովագրության պայմանագրի բոլոր պայմանները, մասնավորապես ապահովագրավճարների չափը, պայմանագրի սահմանափակումները և այլն,
13. հաճախորդին ներկայացնել ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգն ու պայմանները:

### **Ֆիզիկական անձ գործակալն իրավասու առանց Ընկերության նախնական համաձայնության՝**

1. կնքել մինչև 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ ապահովագրավճար կամ մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ ապահովագրական գումար նախատեսող Ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր:  
Նշված գումարից ավել ապահովագրավճար կամ ապահովագրական գումար նախատեսող ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում անհրաժեշտ է ընկերության նախնական համաձայնությունը,
2. ամսական հավաքագրել մինչև 10,000,000 (տաս միլիոն) ՀՀ դրամ ապահովագրավճար: Նշված սահմանաչափը գերազանցելու հավանականության դեպքում, գործակալի դիմումի հիման վրա, Ընկերության կողմից տրված համաձայնությամբ, նշված սահմանաչափը կարող է ավելացվել: